ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿՆԵՐԸ ԶՄՅՈՒՌՆԻԱՅՈՒՄ ԵՎ ԿԻՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ(XVIII Դ.)

ԽԱՌԱՏՅԱՆ Ա.Ա.

Հայ կաթոլիկների՝ նշանակալի քանակով գաղթը դեպի Էգեյանի առափնյակ ծայր է առնում Նախիջևանից, XVIII դ. 40-ական թթ.: Ինչպես և Սյունիքից եկած գաղթականները, նախիջևանցի կաթոլիկները գաղթը սկսեցին կազմակերպված և աննախընթաց մարդաշատ բազմությամբ՝ իրենց հոգևոր ու աշխարհիկ առաջնորդների ծրագրած երթով ու հանգըրվանների հաշվարկումներով: Գաղթի միանշանակ պատճառը Նադիր շահի (1732-1745) ժամանակ սաստկացած տնտեսական և կրոնական բռնություններն էին Արևելյան Հայաստանում և Հարավային Կովկասի մյուս մասերում: Իր նվաճողական հանդուգն ծրագրերն իրականացնելու համար շահը նյութական վիթխարի պահանջները ձգտում էր բավարարել ոչ միայն գրավված վայրերի թալանով, այլև բուն պարսկաբնակ ժողովուրդների հարկային լծի անօրինակ ծանրացմամբ: Թե ինչ ամայացնող մեթոդներով էր կատարվում հարկահանությունը, հուսահատ տողերով է ներկայացնում Վ. Օձնեցին իր «Պատմութիւն Հայոց» շարադրանքում. «Ի ժամանակս Նատիր շահին, - գրում է նա, - որպէս աւանդեն մեզ տարեգրութիւնք եւ աւանդութիւնք հինաւուրց արանց, այնքան մեծացաւ յաշխարհիս Հայոց հարկապահանջութիւն մինչեւ չմնալ առ մեծատունս հարստութիւն ընչից յորոց փոխառեալ ամենեցուն՝ տային հարկապահանջից. ապա ի տեղի դրամոց եւ այլ կահ ու կարասեաց, զորս վճարեալ էին՝ տանէին զերիտասարդս եւ զմանկամարդս զորս ղուլ ծառայ անուանէին, այսինքն սեփհական ծառայ արքունի»[1]:

Չդիմանալով օրինական հռչակված կեղեքումներին և դրանց ուղեկցող այլ անողորմ չարաշահումներին՝ Արևելյան Հայաստանի բնակչության

---

[1] Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. 4331, էջ 51:

մի զգալի մասը բռնեց ապահով վայրեր խույս տալու՝ ավանդական դարձած գաղթերի, մյուսները՝ զինված ընդհարումների և ապստամբությունների ճանապարհը: Տարածաշրջանում ստեղծված իրադրության առթիվ ռուսական զորահրամանատար Մ.Մ. Գոլիցինը 1747 թ. մարտի 15-ին Մուղանից գրում էր. «Պարսկական նահանգի շատ տեղերում այժմ վտանգավոր իրադրություններ և մեծ խառնակություններ կան Գենջե, Իրևան, Նախչևան և Թիֆլիս քաղաքներում. նրանց վրա դրված դրամական տուգանքների անչափելի գումարների պատճառով: Գրեթե բոլոր բնակիչները՝ մեծից մինչև փոքր և իրենք էլ, այդ քաղաքների կառավարիչները, ապստամբեցին, և հավաքելով իրենց ինչքն ու անասունները, հեռացան լեռներ»[2]:

Նախիջևանից գաղթի իրողության և ժամանակի վերաբերյալ արդեն շատ որոշակի տեղեկություններ է տալիս մի Հայսմավուրքի ժամանակակից գրիչը. «Թուահաշուէն Հայոց ՌՃՂԶ (1747) ամսեան ապրելի ԺԱ-ին (11) որ էր ի ժամանակն Պարսից անագորուն եւ անոպա Նադր շահին զոր յոյժ նեղութիւն ունէին Պարսից իշխանութեան ենթ[ակայ] ժողովուրդքն թող զանիրաւ հարկապահանջութիւն զոր առաւել էր քան զառաջինսն յաւել եւս չար ի վ[երայ] չարեաց եւ վէրք ի վ[երայ] վիրաց զոր Նախիջեւանայ երկրին վերայ ձրգեալ էին ԼԵՌ (35 հազար) թում[ա]ն եւ Երեւանու երկիրն ԽՌ (40 հազար) թում[ա]ն որ բազումք հանդերձ տամբք մեծաւ տառապանօք եդեալ ի տանց եւ ի հայրենեաց փախան երկիրն օսմանցոց»[3]:

Ուշագրավ է, որ այստեղ «երկիրն օսմանցոց» են փախել կամ գաղթել առհասարակ Նախիջևանի և Երևանի բնակիչները՝ առանց դավանանքի կամ ազգության որևէ տարբերակման, ավելին, խոսքը, պետք է մակաբերել, վերաբերում է ընդհանրապես պարսից ենթակայության տակ գտնվող տարածքների բնակիչներին: Հայերի պարագայում՝ նաև Սյունիքի և Ղարաբաղի բնակիչներին, որոնք, ինչպես տեսանք, ճիշտ նույն ժամանակներում՝ 1740-ականին և հետո հայտնվել էին Զմյուռնիայում և կից տարածքներում: Գաղթերի այս տեղաշարժական ընթացքը շարունակվելու էր ամբողջ XVIII դարում, թեև խնդիրն այն է, որ այդ ժամանակահատվածում գաղթական ամենամեծ հոսքը տեղի է ունեցել հենց Նադիր շահի իշխա-

---

[2] **Арунова М.Р., Ашрафян К.З.** Государство Надир-шаха Афшара, М., 1958, с. 224.

[3] **Աճառեան Հ.,** Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Բայազետի (Հանդէս ամսօրեայ, 1913, N 10, էջ 630): Գրեթե նույն շարադրանքն ենք տեսնում Խաչատուր աբեղա Ջուղայեցու «Պատմութիւն Պարսից» աշխատության մեջ՝ մասնավորեցված նաև Նոր Ջուղայի հայերին հարկային ահաբեկչության ենթարկելու փաստերով:

նության վերջին տարիներին: Նադիրի անօրինակ հարկապահանջության պատճառը Խաչատուր Ջուղայեցին բացատրում է նրանով, որ նա կասկածում էր հայերին՝ վրացի ապստամբների հետ համագործակցելու մեջ[4]:

Հ. Քոսյանը կարծում է, որ հայ կաթոլիկները Զմյուռնիա են անցել 1730-1740-ի միջոցներին[5], նկատի ունենալով նրանց գաղթը Նախիջևանից: Այս գաղթականությանը բավական ուշադրություն է դարձրել Ղ. Ալիշանը՝ պարզաբանելով և գաղթի պատճառները, և հանգամանքները: Ըստ այդմ, Նախիջևանի կաթոլիկների ու նրանց վանքերի վրա դրված ծանր հարկերն ու դրանք վճարելու համար արված պարտքերը թեթևացնելու համար դեռևս 1843 թ. Վենետիկ էր մեկնել նրանց պատվիրակը՝ տեղի բանկերից նրանց ավանդները Նախիջևան տեղափոխելու մտադրությամբ[6]: Գաղթը կազմակերպելու գործում եռանդուն ջանքեր էր գործադրել դոմինիկյան հայր Թովմաս Իսավերդենցը՝ ունիթորների հոգևոր առաջնորդը, որի գործողությունները պարսիկները կասեցրին՝ բանտարկելով նրան: Հավանաբար, միջամտել են ֆրանսիական կամ պապական դիվանագետները, որոնք մշտապես առնչվում էին կաթոլիկների հետ Նախիջևանում, կամ վերջիններիս ներկայացուցիչներն էին շփվում նրանց հետ Վենետիկում, որտեղ վաղուց ի վեր առևտրական կապեր ու հարաբերություններ ունեին նախիջևանցի վաճառականները: Համենայն դեպս, մահվան դատապարտված Իսավերդենցը ոչ միայն ազատվում է բանտից, այլև կազմակերպում է բազմաթիվ մարդկանց ելքը Նախիջևանից, այսինքն, անարգել շարունակում է գաղթի ծրագիրը. «Այլ յաջողեաց նմա ոչ միայն զերծ անել, այլեւ զերծունել բացի սակաւուց ոմանց զամենայն մնացեալսն՝ տկարս, զծերս եւ զմանկունս եւ զկանայս եւ եռամսեայ դժուարակիր եւ տառապագին ուղեւորութեամբ հատանել անցանել ընդ բովանդակ Մեծ եւ Փոքր Հայս եւ հասուցանել ի ծագ Փոքուն Ասիոյ ի Զմիւռնիա քաղաք ոգիս աւելի քան զհազար, ընդ որս եկին եւ սակաւ ոմանք ի հարց մնացեալ վանորէից»,-գրում է Ղ. Ալիշանը[7]:

Այն, որ հայերի գաղթը նախապես կշռադատվել և ծրագրվել էր նախիջևանցի գլխավորների կողմից, անհերքելի է դառնում այն փաստով, որ

---

[4] **Խաչատուր Ջուղայեցի,** Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 269:

[5] **Քոսեան Յ.,** Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս, հ. Ա, Վիեննա, 1899, էջ 301-302:

[6] **Ալիշան Ղ.,** Սիսական, Վենետիկ, 1893, էջ 406:

[7] Նույն տեղում:

ջահկեցիների բազմությունը տեղափոխելուց առաջ Իսավերդենցը «նախ զմեծատունս ընչիւք նոցին հեռացոյց ի բաժին օսմանեանց», կարելի է կարծել, դարձյալ Զմյուռնիա:

Ոչ Հ. Քոսյանը և ոչ էլ Ղ. Ալիշանը որոշակիորեն չեն նշում նախիջևանցիների ելքի ժամանակը: Հ. Քոսյանը, ընդսմին, նկատում է, որ այդ անցումը տեղի է ունեցել 1730-1740-ի միջոցներին, այսինքն, Նադիր շահի օրոք[8]: Բայց խնդիրն այն է, որ Զմյուռնիայում կաթոլիկ նախիջևանցիներ են ապրել և մահացել նախքան Իսավերդենցի կողմից կազմակերպված գաղթը, այսինքն՝ մինչև 1747 թվականը: Հ. Քոսյանի վկայակոչած տապանագրերը, իսկապես, այդ թվականից ավելի հին են, այսինքն, այստեղ հայտնվել են հայ կաթոլիկներ, նախքան մեզ արդեն հայտնի՝ 1747 թ. բազմամարդ գաղթը: Այդպիսիք են Իսավերդենցի համագյուղացի՝ Խոշկաշինեցի Գալուստի որդի Դավթի, որ «փոխեցաւ ՌԷՃԼԴ» (1734), Խոշկաշնեցի Նահապետի որդի Աստվածատուրի՝ ՌՁԽԵ (1745) մահվան թվականները կրող տապանաքարերը[9]:

Հ. Աճառյանը կարծում է, նկատի առնելով 1730-1740-ական թթ. առհասարակ գաղթականական տեղաշարժերը Արևելյան Հայաստանից, որ կաթոլիկ հայերը Թովմաս Իսավերդենցի գլխավորությամբ Զմյուռնիա են անցել 1730-ական թթ.[10]: Իր շատ ուշագրավ աշխատության մեջ Մ.-Կ. Սմիրնելիսը այս հարցում չի խախտում վերը նշված տասնամյակի ժամանակահատվածը՝ նշելով, որ կաթոլիկ հայերի մի մասը Զմյուռնիա է անցել դոմինիկյան հայր Թ. Իսավերդենցի առաջնորդությամբ[11]:

Այսուհանդերձ, կարելի է որոշ մանրամասներ ավելացնել գաղթի ժամանակի խնդրին: Գաղթը իրականացվել է 1747 թ., ինչը տեսանք վերը նշված՝ Նոր Բայազետի Հայսմավուրքում, որտեղ ՌՃՂԶ (1747) ապրիլի 11-ը աներկբայորեն վերաբերում է կաթոլիկների՝ հայրենի Նախիջևանը լքելու տարվան ու ամսաթվին, իբրև հետևանք իր ծանրությամբ աննախընթաց հարկահանության: Սկզբնաղբյուրներից օգտվելու իր առավելութ-

---

[8] **Քոսեան Յ.,** նշվ. աշխ., էջ 304:

[9] Նույն տեղում, էջ 311: Պետք է նկատի ունենալ, որ նախիջևանցի կաթոլիկները դամբանագրերում գործածել են հայկական այբուբենի զուտ թվային արժեքը՝ առանց 551-ի հավելման:

[10] **Աճառյան Հ.,** Հայ գաղթականության պատմություն, Ե., 2002, էջ 552:

[11] **Smyrnelis M.-C.** Les Arméniens catholiques de Smyrne aux XVIIIe et XIXe siècles. Revue du Monde Arménien, Paris, 1995-1996, p. 29.

յամբ Հ. Քոսյանը իր հերթին հավելում է, որ Զմյուռնիայում հանգրվանած նախիջևանցիները 1748 թ. դիմել են տեղի օսմանյան իշխանություններին՝ մատուռի շինության խնդրանքով[12]: 1747 թ. ապրիլին գաղթականները մեծ բազմությամբ և «մեծաւ տառապանօք» վտանգավոր ու հեռավոր ճանապարհ կտրելով՝ այստեղ կարող էին հասնել յոթ-ութ ամիս անց և բնակության նոր վայրում փոքր ի շատե հարմարվելուց հետո միայն կարող էին մատուռի շինության հարց հարուցել, որ միանգամայն համընկնում է 1748 թվականին:

Դեպի Զմյուռնիա գաղթելու մտադրությունը բավականաչափ հասկանալի է դառնում Նախիջևանի հայ վաճառականության՝ Էգեյանի առափնյակի հետ ունեցած դարավոր առևտրական կապերի հետնախորքում: XVII դ. առաջին քառորդին ևս նախիջևանցիներ կարող էին հայտնվել Զմյուռնիայում՝ զուտ առևտրական առնչությունների շնորհիվ և այս դեպքում՝ առանց դավանական տարբերակման: Դրա ամենևին էլ ոչ հեռավոր արձագանքը կարելի է համարել Բերգամայի ձեռագրերից մեկի հիշատակարանը. «Գրեցաւ... ի երկրին ասիացոց ի վիճակս սբ. Յովհաննու Ավետարանչի ի քաղաքս Պէրկամա ի թուիս Հայոց ՌՃԻԴ (1675): Ես գաղցի Գրիգոր էրէցս որ եմ ի յերկրէն Նախչուանու ի գեղջէն որ յայժմ կոչի Գաղ»[13]:

Մինչև խնդրո առարկա գաղթը Զմյուռնիայում հայ կաթոլիկների ներկայության մասին է փաստում գրիչ Հովհաննես Ջահուկեցու կողմից 1738 թ. (այսինքն՝ Թ. Իսավերդենցի կազմակերպած 1747 թ. գաղթից գրեթե մեկ տասնամյակ առաջ) ընդօրինակված՝ Հովհան Քռնեցու (XIV դ.) «Գիրք ի վերայ երկուց բնութեանց» շարադրանքը[14]: Հովհան Քռնեցու՝ դոմինիկյան այդ նշանավոր քարոզչի և ունիթորների առաջնորդի գործի ընդօրինակումը վկայում է, որ գրիչ Հովհ. Ջահուկեցին ունեցել է իր պատվիրատուն կամ համախոհ հայրենակիցները Զմյուռնիայում: Նույն եզրակացությանն է առնչվում դարձյալ 1738 թ. Զմյուռնիայում գրչագրված մի ձեռագրի պարագայում. ձեռագիրը՝ «Վիճաբանութիւն աստուածաբանութեան» վերնագրով, հիշեցնում է նախիջևանցի ունիթորների ներկայությունն այստեղ՝ իր բացատրությամբ. «ի լաթիներէն ի հայ բարբառ թարգմանեցեալ ի

[12] **Քոսեան Յ.,** նշվ. աշխ., էջ 306:
[13] Մատենադարան, ձեռ. 4669, էջ 211/բ:
[14] Մատենադարան, ձեռ. 842, էջ 142/ա:

Թումաս վարդայբետէ ազնիւ Ջուղայ քաղաքէն Ճահուկեցւոյ ի սրբազան կարգէն քարոզողաց»[15] (իմա՛ դոմինիկյան քարոզիչների):

Չի բացառվում, ի դեպ, որ այս գործի թարգմանիչը լինի հենց ինքը՝ Թովմաս Իսավերդենցը («Թումաս վարդայբետը»), որի աշխատանքի արգասիքը հետագայում Զմյուռնիայում կարող էր ընդօրինակվել (կամ հայտնըվել) այստեղ գործող իր ազգական Իսավերդենց եղբայրների ազդեցիկ առևտրական ընկերության պատվերով: 1830-ական թթ. տպագրած իր երկհատոր աշխատության մեջ անգլիական դիվանագիտական ներկայացուցիչ Ֆ. Հերվեն գրում է, որ զմյուռնաբնակ «հույները և հայերը կապ են հաստատել Լոնդոնի, Փարիզի, Մարսելի, Տրիեստի և Եվրոպայի այլ մասերի հետ: Այն ժամանակ, երբ ես բնակվում էի այնտեղ (Զմյուռնիայում-Խ. Ա.), Իսավերդենց ընկերությունն իր առևտրական գործարքներն իրականացնում էր ամենալայն թափով կամ, առևտրական լեզվով ասած՝ առավելագույն չափերով էր գլուխ բերում իր գործերը: Ձեռնարկը տնօրինում էին հայերը, թեև ներկայումս նրանք իրենց ֆրանկ են համարում: Բայց եղբայրները (Իսավերդենց եղբայրները-Խ.Ա.) շատ չանցած առանձնացան, գործը բաժանվեց երկու տարբեր ընկերությունների միջև»[16]:

Նկատենք, որ ջահկեցիները և Նախիջևանի մյուս կաթոլիկները հազիվ թե ցանկություն ունենային, այն էլ հոծախումբ, Կ. Պոլիս անցնելու: Օսմանյան մայրաքաղաքում ավանդական բնույթ էին կրում ընդհարումներն ու երկպառակությունները, մի կողմից, հայ առաքելականների և կաթոլիկամետների միջև, մյուս կողմից, իշխանությունների անհանդուրժողականության պոռթկումները ազգային եկեղեցուց դիմաշրջված կամ կաթոլիկական դավանանքին հարած հայերի դեմ: 1730-1740-ական թթ., դրությունը բարդանում էր նրանով, որ Կ. Պոլսի կաթոլիկ հոգևոր վերնախավն ու սրան մշտապես սատարող ֆրանսիական դեսպանատունը հարուցում էին կաթոլիկ եկեղեցու հայ հետևորդների համար անջատ եկեղեցի ստեղծելու խնդիրը: Բանը հասել էր նրան, որ հայ կաթոլիկները Կ. Պոլսում սկսել էին բացահայտորեն խախտել օտար եկեղեցիներ հաճախելու պետական արգելքը: Դեռևս XVII դ. գործողության մեջ դրված այս արգելքը բխում էր պե-

[15] Մատենադարան, ձեռ. 842:

[16] Armenians in the Ottoman Empire. El. Editor Ghazarian V. Mayreni Publishing Waltham, Massachusetts, 1997, p. 270. Իսավերդենց տոհմից էր ծննդյամբ զմյուռնացի, Վենետիկի Մխիթարյաններից Հակոբոս Վ. Իսավերդենցը՝ «Բազմավէպի» խմբագիրներից մեկը (տե՛ս Բազմավէպ, 1902, N ԺԱ, էջ 496):

տության շահերից՝ թույլ չտալու հայ միլեթի դավանական փլուզումը հոգուտ կաթոլիցիզմի, ասել կուզի՝ ֆրանսիական կամ ավստրիական ազդեցության ընդլայնմանը Թուրքիայում: Մ. Օրմանյանն ընդգծում է այս հարցում լատին եպիսկոպոսի և քարոզիչների եռանդուն գործունեությունը 1730-ական թթ.՝ առավել խորացնելու նրանց հայ հետևորդների և առաքելական եկեղեցու միջև եղած սեպը: Օսմանյան կառավարությունը, գրում է նա, «Չէր կրնար ներել օտարներու հետ մտերմութիւնը և անոնց հպատակութիւնը, ուստի փոխադարձաբար զգուշութիւններ և նոր արգելքներ հրամայեց, որով օտար եկեղեցի յաճախողները ձերբակալուեցան, բայց տուգանքով թողուեցան»[17]:

Նույն գայթակղություններն ու գրգռությունները ջրի երես դուրս եկան նաև հաջորդ տասնամյակին, երբ կաթոլիկները Կ. Պոլում սկսեցին բացեիբաց խոսել Սամաթիայի Ս. Գեորգ և Ղալաթիայի Ս. Լուսավորիչ եկեղեցիները իրենց ենթակայությանը, իբր, հանձնելու մասին: Դարձյալ կառավարությունը չհապաղեց միջամտել: Հետևեցին բանտարկություններն ու պատիժները. «Միւս կողմէն, - հարում է Մ. Օրմանյանը, - փոխադարձ թշնամութիւններ ալ ասպարէզ կը գտնեն եւ մատնութիւնք, նեղութիւնք եւ տառապանք ազգին մէջ կը յաճախեն»[18]:

1730-1740-ականներին նշված խնդրի շուրջ ստեպ պոռթկացող գժտությունները ավելի հիվանդագին որակների չվերածվեցին, մի կողմից, Կ. Պոլսի հայոց պատրիարք Հովհ. Կոլոտի, ապա նրան հաջորդած Հ. Նալյանի լայնախոհության և, մյուս կողմից, ֆրանսիական դեսպանների զգուշավորության շնորհիվ: Ավելացնենք, որ պատժիչ գավազանը միշտ գործադրելու հակամետ օսմանյան կառավարությունը 1750-1770-ական թթ. անցավ էլ ավելի անհանդուրժող քաղաքականության՝ հայրենի եկեղեցուց դիմադարձ հանդուգն հայերին պատժելու համար: Ժամանակի թուրքական պատմագիր Ջեվդեթ փաշան հանրագումարի էր բերում կառավարության այս ուղեգիծը, երբ գրում էր, որ «Օսմանյան պետության հպատակներից մի փոքր հասարակության (հայ հանրության-Խ.Ա.) այդպիսի մի օտար եկեղեցու հպատակությունը քաղաքական խռովություն է համարվում»[19]:

---

[17] **Օրմանեան Մ.,** Ազգապատում, հ. Բ, Էջմիածին, 2001, էջ 3325:

[18] Նույն տեղում, էջ 3392:

[19] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմ. Ա.Խ. Սաֆրաստյան, Ե., 1961, էջ 238: Այսուհանդերձ, կաթո-

Բավականաչափ շրջահայաց Թովմաս Իսավերդենցը՝ Նախիջևանի Խոշկաշեն բնակավայրից, դոմինիկյան մյուս հայրերի հետ միասին չէր կարող այսպիսի պայմաններում նոր բնակության վայր համարել դավանական հակասությունների խառնարան ներկայացնող Կ. Պոլիսը: Զմյուռնիան այս տեսակետից անհամեմատ հանգստության և ապահովության հույսեր էր ներշնչում. այստեղ չկար ոչ մահմեդական պահպանողականություն, և ոչ էլ, ըստ այդմ, իշխանությունների վերահսկողական անխափան գործառույթ, որ ձգտում էր տնօրինել ամեն ինչ: Չկար նաև դավանական պատրաստի առարկությունները ձեռքին ազգային եկեղեցին՝ պատրաստ ըմբերանելու կաթոլիկամետ ազգակիցներին, իսկ եթե կար՝ ապա ամենևին էլ ոչ վարչական այնպիսի հնարավորություններով, ինչպիսին ուներ պոլսահայ հոգևորականությունը, որովհետև Զմյուռնիան և փոքրասիական մյուս հայ համայնքները Էջմիածնի տերունի թեմն էին՝ Կ. Պոլսի պատրիարքության հետ ունեցած գրեթե աննշմար կապերով ու հարաբերություններով, որոնք չէին կարող խանգարել հայ կաթոլիկների՝ սեփական դավանական հարմարավետության վերաբերյալ պատկերացումներին: Կար նաև ամենակարևորը՝ Զմյուռնիայի եվրոպական ազատամիտ համայնքը՝ իր կաթոլիկներով, բողոքական այլևայլ ճյուղավորումներով ու անհիվանդագին համակեցությամբ, որտեղ եթե բախումներ ենթադրվեին, այն էլ միայն առևտրական հրապարակներում, որոնց տարածքում իրեն այնքան ինքնավստահ կարող էր զգալ նախիջևանցի ունիթորների աշխարհիկ վերնախավը: Օսմանյան իշխանություններն այստեղ մտորելու տեղիք տվող չափերով զուսպ էին՝ միջազգային այդ նավահանգստի բազմազգ և բազմակրոն շուկայում, ուր անտեսանելի թելերով ավելի շուտ վե-

---

լիկ հայերին ի նպաստ գործեց ավստրիական դեսպանն այն բանից հետո, երբ 1772 թ. պատրիարքական աթոռին հայտնված Զաքարիա Կաղզվանցին ուժգին հալածանք սկսեց կաթոլիկ հայերի դեմ և ապա, այդ պատճառով, պաշտոնազրկվեց: 1782 թ., վերստին բազմելով պատրիարքական աթոռին, Զաքարիան հարկադրված էր շատ ավելի զգուշավոր գործել կաթոլիկ հայրենակիցների դեմ և անգամ տեղի տալ առաքելական եկեղեցի չհաճախելու վերաբերյալ նրանց պահանջներին, անշուշտ, ոչ առանց Բ. դռան համաձայնության: Զաքարիան, գրում է Ավ. Պերպերյանը, «Արար ժողով ի պատրիարքարանին եւ օրինադրեաց զի Հայք մի արասցեն խնամութիւն ընդ հռովմեական հայոց եւ մի ազգականութիւն եւն, այսպես որոշեաց զսոսա իբրեւ զազգ մի (առանձին ազգ - Խ.Ա.), որոց ուրախացեալ ընդ այս առաւել եւս վստահացան որոշումն իւրեանց եւ սկսան յայնմհետէ չերթալ երբեք եկեղեցիս հայոց, այլ միայն եկեղեցիս լատինացւոց» (**Պէրպէրեան Աւ.,** Պատմութիւն Հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 3):

ռահսկում էին եվրոպական հյուպատոսները՝ թեկուզ և պայմանականորեն հաստատված իրենց իրավասությունների սահմաններում: Հիրավի, այստեղ ամեն ինչ պատրաստ էր անհիվանդագին, արագ ու խաղաղ ձուլման համար, որի մասին նախապես չէին էլ կարող պատկերացնել պարսկական սարսափները ճաշակած նախիջևանցիները՝ գաղթի մտադրությունը հղանալու և իրականացնելու պահերին:

Գայթակղիչ էր նաև ֆրանսիական հյուպատոսի՝ սերտ առնչություններից մինչև քաղաքական հովանավորություն մատուցելու հնարավորությունը հատկապես կաթոլիկամետ կամ կաթոլիկ դարձած հայերի, հույների և այլ տարադավան խմբերի ու անձանց նկատմամբ: Զմյուռնաբնակ եվրոպական համայնքն ինքնին վայելում էր եվրոպական հյուպատոսների խնամակալությունը, որ լռելյայն հարգվում էր օսմանյան իշխանությունների կողմից: Վարչաքաղաքացիական իմաստով, հետևաբար, իրենց պաշտպանված էին զգում ոչ միայն հյուպատոսարաններին կապված տեղաբնակ դրագոմանները, այդ թվում և հայկական միջավայրից, այլև ամենատարբեր զբաղմունքի տեր մարդիկ: XVIII դ. հովանավորչության այս շատ տարածված երևույթը շարունակվում էր նաև հաջորդ դարի երկրորդ կեսին, ըստ էության, մի հայտնի չափով ամրացնելով օտարերկրյա դեսպանատների և հյուպատոսարանների քաղաքական դիրքն ու ազդեցությունը Օսմանյան Թուրքիայում: Այս տեսակետից հետաքրքրական է Զմյուռնիայում և կից շրջաններում (Էջմիածնի նախկին տերունի թեմ) Մայր աթոռի սեփականությունների գործակալ Թ. Չելիկի նամակը (1852, 16 մայիսի) կաթողիկոս Ներսես Աշտարակեցուն, որը բավականաչափ լույս է սփռում այս խնդրի վրա: Չելիկի տողերից հայտնի է դառնում, որ 1825 թ. ի վեր, տերունի թեմը կորցնելուց հետո, իր կալվածքներն այստեղ այլևս չվերահսկող Էջմիածինն իր սեփականատիրական իրավունքները վերականգնելու հնարավորություն կարող է ունենալ միայն ռուսաց հյուպատոսի հովանավորությամբ, որ կարող էր նա ցուցաբերել իրեն՝ Չելիկին, եթե սա դատական գործ հարուցեր հօգուտ Էջմիածնի իրավունքների: Այդ դեպքում, գրում է Չելիկը, «պաշտպանութիւն եղիցի ինձ ի վսեմափայլ ընդհանուր հիւպատոսէ ռուսաց, որ ի քաղաքիս, քանզի անշուշտ պատահել ունեն դէպք յայս առ անվնաս պահելով զօգուտ Սբյ. Աթոռոյն պարտաւորեցայց գուցէ դիմել ի դատաստան տեղական կառավարութեան, վասն որոյ պէտս ունիմ հզօր

պաշտպանութեան միոյ, զի իբրեւ գործակալ Ս. Աթոռոյն կարողացայց յառաջ տանել զիրաւունս Սրբոյ գահին:

Ի տեղեկութիւն ձերոյ վեհափառութեան ասեմ՝ զի գործակալն և թարգմանն հռոմեական աթոռոյն եւս պաշտպանութիւն ստանա աստ (Զմյուռնիայում-Խ.Ա.) ի գաղղիական հիւպատոսէ քանզի այսպէս է սովորութիւն ի կողմանս յայսոսիկ»[20]:

Մ.-Կ. Սմիրնելիսն ուշադրություն է դարձնում այս յուրահատուկ հովանավորության իրավական նշանակությանը՝ միանգամայն տարբերակելով այն կրոնական հովանավորությունից: Բայց այնչափով, որչափով հովանավորյալը կարող էր օգտվել արտասահմանյան տվյալ երկրի (եվրոպական, ռուսական) հպատակի իրավունքներից, չվճարել գլխահարկ (խարաջ, ջիզյե) և անգամ իր միլեթի (համայնքի) հարկերը[21], իշխանությունների հետ մտնել դատաիրավական գործընթացների մեջ, իրավական հովանավորությունը, կարծում ենք, մեքենաբար և անխուսափելիորեն գերաճում էր կրոնական հետևանքների: Այդ էր պատճառը, որ, ինչպես նկատում է այս հետազոտողը, համայնքները և պետությունը շահագրգռված չէին հովանավորյալների թվաքանակի մեծացմամբ[22]:

Նախիջևանցիները Զմյուռնիայում համեմատաբար դյուրավ հիմնավորվեցին և ձեռք զարկեցին վաճառականության, առևտրի ու արհեստների՝ դոմինիկյան հայրերի շնորհիվ արժանանալով նաև ֆրանսիական հովանավորությանը[23]՝ XVIIIդ. առաջին քառորդին այստեղ հաստատված կաթոլիկ հայրենակիցների աջակցությամբ ևս:

Թ. Իսավերդենցի առաջնորդությամբ, եթե նկատի առնենք նրա կազմակերպած երկրորդ գաղթը, Զմյուռնիա են անցել ավելի քան 1000 մարդ[24], բայց եթե հիշենք, որ դրանից առաջ էլ նա հաջողել էր ապահովել որոշ հոգևորական հայրերի և մեծահարուստների ելքը («նախ զմեծատունս ընչիւք նոցին»[25]), բնականաբար, իրենց ընտանիքներով, այդ թիվը

---

[20] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 167, վավ. 448:

[21] **Smyrnelis M.-K.,** նշվ. աշխ., էջ 34:

[22] Նույն տեղում, էջ 35: Ավելի ուշ շրջանի՝ 1822 թ. հովանավորյալների թվում Մ.-Կ. Սմիրնելիսը հիշում է պարսկահայ կաթոլիկներից երկու Ժերիսյանների (հավանաբար, Երիցյանների), Անդրե Բալադյուրին (կարելի է կարծել՝ Բահաթրյան), երկու Իսավերդենցների (դոմինիկյան առաջնորդի տոհմից) և այլն (նույն տեղում):

[23] **Քօսեան Յ.,** նշվ. աշխ., հ. Ա, էջ 307:

[24] **Ալիշան Ղ.,** նշվ. աշխ., էջ 406:

[25] Նույն տեղում:

շատ ավելին պետք է լիներ: Էգեյականի ափերն հասած գաղթականները, սակայն, ցրվել են ոչ միայն մերձակա քաղաքներում, այլև Կ. Պոլիս, Իտալիա և այլուր, իսկ Իսավերդենցը 1762 թ. մեկնել էր Անկոնա և այլևս չէր վերադարձել: Համենայն դեպս, 17 տարի անց Զմյուռնիայում նորաբնակ ունիթորներից մնացել էր 700 մարդ, ինչպես գրում են նրանք Հռոմի Ս. Ժողովին ուղղած իրենց խնդրագրում (1764 թ. ապրիլի 15), «վասն մեղաց մերոց բազմացան նեղիչք մեր (Նախիջևանում-Խ.Ա.) որ ոչ կարացաք տանել. Վասն այսորիկ թողաք զհայրենի յերկիրն մեր եւ բնակութիւնն մեր, եկաք աստ ի քաղաքն Իզմիռ եւ մասն մի ի քաղաքն Թիրադիր (Թիւրատիր) որ եմք թվով 700 անձինք… Այժմ որբ մնացաք մեք եւ առանց հոգեւոր մխիթարութեան…»[26]:

Խնդրարկուները թախանձում էին վերադարձնել իրենց քարոզչին՝ Իսավերդենցին, որին այլևս վիճակված չէր հովվել իր ժողովրդին: Դատելով խնդրագրի հեղինակների կողմից նրան տրված անառարկելիորեն դրական բնութագրից, որի կարևորությունը ընդգծված է այդ շարադրանքում, դրան խանգարել էին կաթոլիկական հայրերի տարաձայնությունները իր գործունեությունը դադարեցրած Դոմինիկյան միաբանության շուրջ: Իսկ նախիջևանցիների թվաքանակը հետագայում, մինչև դարավերջ, գնալով նոսրանում էր: 1790-ական թթ. անգամ Անկյուրիայից, Թոքատից և այլ վայրերից եկած նոր գաղթականներով հանդերձ, Զմուռնիայում հայ կաթոլիկների թվաքանակը նոսրանում էր, նրանք ձուլվում էին կաթոլիկական զանգվածի մեջ: XIX դ. վերջին, որպես այդպիսին, հայ կաթոլիկների թիվն այստեղ հասել էր 150-200 մարդու՝ ըստ Հ. Քոսյանի, և 300 ընտանիքի՝ ըստ «Արարատ» ամսագրի հեղինակի[27]:

Նախիջևանցիները Զմյուռնիայում պետք է վերջնականապես խզեին իրենց կապերը ազգային եկեղեցու և կրթության հետ, կարելի է կարծել, 1772 թ., Զաքարիա պատրիարքի կողմից հայ եկեղեցու դռները նրանց

---

[26] Նույն տեղում, էջ 407: Հայերի մեջ, այդ թվում և փոքրասիական շրջաններում կաթոլիկական հավատի տարածման գործը վերահսկելու համար Հռոմի Ս. Ժողովը նախապես լատին հայագետ կրոնավորներ, ապա ուրբանյան դպրատան շրջանավարտներ, իսկ XVIII դ. նաև մխիթարյան հայրերի ու լիբանանյան անտոնյան միաբանների էր առաքում (տե՛ս **Գալէմքեարեան Գր.,** Կենսագրութիւն Սարգիս արքեպիսկոպոս Սարաֆեան, Վիեննա, 1908, էջ 257):

[27] **Քոսեան Յ.,** նշվ. աշխ., հ. Ա, էջ 33: **Հովիւ,** Մի տխուր պատկեր հռովմեական հայոց կեանքէն (Արարատ, Էջմիածին, 1896, N 6, էջ 175):

առջև փաստորեն փակելու անխոհեմ որոշումից հետո, որին անդրադարձանք վերը (տե՛ս հղում 19): Հայերեն խոսող Իսավերդենցից կամ մի որոշ ժամանակ նրան փոխարինողից հետո ազգային լեզուն դուրս մղվեց այդ հանրության հաղորդակցությունից, որն իր հերթին մեծապես նպաստեց ազգային ծեսերի ու արարողությունների վերացմանը նրանց մեջ և անառարկելի անցմանը կաթոլիկական պաշտամունքին: Պաշտամունքն արդեն կատարվում էի լատին կապուչիններ կողմից՝ միանգամայն խորթ ազգային բարքերին ու սովորույթներին: Այդ արդեն կաթոլիկ հայերի ուծացումն էր նշանակում: Վերոհիշյալ Խոշկաշեն գյուղից կամ բնակավայրից սերած կաթոլիկների դամբանագրերը, որ վերարտադրել է Հ. Քոսյանը, ցույց են տալիս առհասարակ զմյուռնաբնակ հայ կաթոլիկների օտարվելու աստիճանական ընթացքը: 1744 և 1741 թթ. (նախքան մեծ գաղթը՝ 1747 թ.) դամբանագրերում մահվան տարին նշված է հայերեն թվատառերով (թեև ոչ հայկական, այլ գրիգորյան տոմարով)՝ Խոշկաշինեցի Գալուստի որդի [Դ]ավիթ, որ փոխեցաւ ՌՃԼԴ (1744), Խոշկաշնեցի Նա[հապե]տի որդի Ա[ստված]ատուր, ՌՋԽԱ (1741), Խոշկաշինեցի Ումիտի որդի Ակոբ (1757) և այլն (բոլորն էլ ոչ հայկական տոմարով)[28]:

1760-ական թթ. սկսած, մինչև 1790-ական թթ. տապանագրերը արդեն գրված են միայն արաբական թվանշաններով՝ եվրոպական ձևով. Խոշկաշինեցի Մանասի դուստր Անաստաս՝ 1761, Արարնեցի Յովհաննէսի որդի Մաթոս՝ 1760, սրա որդի Անդրեաս՝ 1763, մյուս որդին՝ Պողոսը, 1770, Թոխատցի Ըստեփանի որդի Պետրոս՝ 1795 և այլն[29]:

Վերոհիշյալ օրինակները ինչ-որ չափով անդրադարձնում են նախիջևանցիների կողմից ավանդութային՝ տապանագրերին հայկական տառանիշեր (թվանշաններ) դրոշմելու սովորությունը թողնելը և դրանց եվրոպական համարժեքներին անցնելը: Դրանից առաջ էլ, Զմյուռնիայում տեղավորվելուց ի վեր նրանք կապ չեն ունեցել հայկական գերեզմանատան հետ և իրենց ննջեցյալներին թաղել են Ս. Պոլիկարպոս երբեմնի հայ կաթոլիկական եկեղեցու գավթում կամ շուրջը: Խնդիրը, սակայն, միայն թվանիշերը չէին և ոչ էլ անգամ հուղարկավորության համար առանձին վայր տնօրինելը: Կարևորն այստեղ այդ և նման գործոնների բազմապատկումն էր, այն, որ հայ կաթոլիկները եվրոպական բարքերին ու սովորույթներին

[28] **Քոսեան Յ.,** նշվ. աշխ., հ. Ա, էջ 311:
[29] Նույն տեղում, էջ 312-313:

են անցել արդեն 1760-ական թվականներից, բնականաբար, ոչ միայն այդ տասնամյակից, այլ մինչև դարավերջ և դրանից հետո, աստիճանաբար, որ գահավիժման չափ արագացել է և որակական ծավալներ ստացել 1831 թ. Օսմանյան Թուրքիայում առանձին հայ կաթոլիկական համայնքի ճանաչումից հետո: Այդ գործոնների մեջ Հ. Քոսյանը իրավացիորեն առանձնացնում է մայրենի լեզուն չպահպանելը, ամբողջովին օտար կրթության անցնելը և տոհմային սովորույթների մոռացությունը, որոնց հիմքում անխուսափելիորեն ընկած էր հայ համայնքից ու եկեղեցուց անջատ ապրելու իրողությունը[30]:

1894 թ. մեզ արդեն ծանոթ Հովիվը, արձանագրելով Զմյուռնիայի կաթոլիկ հայերի սերունդների ամբողջովին ձուլումը եվրոպական ազգերին, կշտամբում էր այդ անկումը չկանխող հայ եկեղեցուն՝ անտարբերության համար, ընդգծելով այդ խնդրում լատին եկեղեցու հույժ ակտիվությունը, որ հասցրել էր դավանափոխների կողմից իրենց սեփական ազգային արմատները կտրականապես մերժելու մտայնությանը. «Դաւանափոխք ոչ միայն իրենց անուն փոխած են, այլ նաեւ մականուն, տոհմանունն... աւելի կը սիրեն ասել, թէ իրենք սերած են աճեմներէ (պարսիկներէ), քան թէ հայերէ»[31]:

Կաթոլիկական եկեղեցին Զմյուռնիայում, իսկապես, ամենայն հոգածությամբ ձեռնամուխ եղավ հավատափոխներին իր փարախը վերջնականապես քաշելու գործընթացին՝ նույնիսկ տարբեր միաբանությունների սուր

---

[30] Նույն տեղում, էջ 310:

[31] **Հովիւ,** նշվ. աշխ., էջ 175: Հիրավի, կարծես տեղի տալով ազգության կամ ծագումնաբանական անցյալի վրա խաչ քաշելու և անգամ իրենց պարսկական ծագում վերագրելու Նախիջևանի կաթոլիկների բուռն ցանկությանը՝ Մ.-Կ. Սմիրնելիսը իր վերոհիշյալ աշխատության մեջ այդ դավանափոխներին, թեկուզ և չակերտների մեջ, ամենուրեք անվանում է պարսիկներ: Պետք է նկատել, սակայն, որ Պարսկաստանի տիրապետության ներքո գտնվող Արևելյան Հայաստանի քաղաքների ու բնակավայրերի բոլոր հայ վաճառականները դեռևս XVII դ. և թերևս, ավելի վաղ ժամանակներից ճանաչված էին «աճեմ պազրկյաններ» ընդհանուր անվամբ (ջուղայեցիներ, նախիջևանցիներ, սյունեցիներ, ագուլեցիներ, երևանցիներ և այլն), որը ոչ մի կապ չունի պարսիկների հետ (բացի պարսկական տիրապետության տակ գտնվելու իրողությունից): Նրանց այդպես էլ անվանում է Ավետիք պատրիարքն իր կենսագրության մեջ (1709): Հռոմ մեկնելու պատրաստվող Եղիազար Այնթափցուն, ըստ նրա, տարհամոզում են հոգևոր և աշխարհիկ հեղինակավոր անձինք՝ հետ կանգնելու իր մտադրությունից և անցնելու Էջմիածին՝ զբաղեցնելու վախճանված Հակոբ կաթողիկոսի աթոռը. «Իզմիրու եղեալ աճէմ պազիրկեան վաճառականքն եւս յոյժ աղաչեցին»,- գրում է նա [Կենսագրութիւն Աւետիք պատրիարքի հայոց (Արարատ, Էջմիածին, 1874, N 1, էջ 75)]:

մրցակցության գնով: Հարուստ նախիջևանցիներին իրենց ծխերում տեսնելու անդիմադրելի ցանկությունը տևական տարաձայնությունների ասպարեզ դարձավ ֆրանցիսկյան միաբանության և կապուչինների գլխավորների միջև, որն ի վերջո, ավարտվեց ֆրանսիական դեսպանության և միաբանությունների փոխադարձ համաձայնությամբ, որի համեմատ ծխերը բաժանվեցին ըստ համապատասխան աղոթատեղիների[32]: Ծխերի շուրջ և դրանք վերահսկելուն ուղղված հակասությունները շարունակվեցին նաև հետագայում, երբ հայ կաթոլիկները Զմյուռնիա ապաստանած նոր գաղթականների համալրմամբ ավելի մարդաշատ էին դարձել: Հ. Քոսյանն այդ գաղթը բացատրում է զուտ տնտեսական իրողություններով, երբ (XVIII դ. վերջերին) «բաւական թուով կաթողիկեայ հայ գաղատիացի վաճառականներ իրենց բախտն այլուր փորձելու համար թողած են իրենց ծննդյան վայրը եւ տնով-տեղով դիմած են Զմյուռնիա»[33]:

Կարելի է կարծել՝ ոչ միայն առևտրական բախտը փորձելու գայթակղությունը, այլև սոցիալական ու դավանական տեսակետից Զմյուռնիայի անհամեմատ ապահով՝ կաթոլիկական և եվրոպական խնամարկություն խոստացող միջավայրում:

Այստեղ ևս հարկ է նկատել, որ անկյուրացիները (գաղատացիները) մինչ այդ էլ և ծանոթ առևտրական ուղիներով դրանից շատ ավելի առաջ էին հայտնվել Զմյուռնիայում, ընդսմին, բավական թիվ ներկայացնելով: Սարգիս Սարաֆյան վարդապետը, որ Զմյուռնիայում մի տևական ժամանակ զբաղված էր կաթոլիկ քարոզչության աշխատանքով, 1754թ. հունիսին և ոչ առանց ներքին բավարարվածության, գրում էր Վենետիկ, Ստեփանոս (Մելքոնյան) աբբահորը. «Բայց քէոշէ - պուճախ քրթմնջեն ոմանք ի ծածուկ՝ գաղատացիք ամենայիմարք, բայց գտանին նոցա ըմբերանօղք բազումք, որոյ վասն եւ գլխաւորք նոցին գան եւ գնան առ իս եւ մեք շահեմք զնոսա բարոյականաբար…»[34]:

Գաղատացի ընդդիմախոսների նկատմամբ քամահրանքը ինքնին խոսում է քարոզչի վրիպումների մասին, սակայն այստեղ կարևորն այն է,

---

[32] **Smyrnelis M.-K.,** նշվ. աշխ., էջ 31-32: Ղ. Ալիշանը նկատում է, որ 1850-ական թթ. Զմյուռնիայում գործում էին կաթոլիկական Ս. Պոլիկարպոս և Լազարյան միաբանության Հիսուսի սիրտ եկեղեցիները (տե՛ս **Ալիշան Ղ.,** նշվ. աշխ., էջ 345):

[33] **Քոսեան Յ.,** նշվ. աշխ., հ. Ա, էջ 320:

[34] **Տայեան Ղ.,** Մայր դիւան Մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար 1707-1773, Վենետիկ, 1930, էջ 163:

որ նրան առարկել են զմյուռնաբնակ գաղատացիները, հնարավոր է՝ ազգային եկեղեցու հետևորդներ, որոնց վրա ձգտել է «բարոյականաբար» ներգործել Ս. Սարաֆյանը: Զմյուռնիայում բնակվող գաղատացիները ևս կարող էին պահպանել իրենց կապերը Գաղատիայի իրենց հայրենակիցների հետ և վերջապես, XVIII դ. 90-ականի գաղթից դեռ շատ առաջ էլ գաղատացի հայ կաթոլիկ վաճառականներ նույնպես կարող էին լինել Էգեյանի առափնյա շրջաններում: Հետևաբար, բնավ պատահական չէր կարող լինել այն իրողությունը, որ իբրև գաղթի վերջնական մեկնակետ, գաղատացիներն ընտրեին Զմյուռնիան և շրջակայքը: Հ. Քոսյանը գրում է, որ Այդընում բնակվող 10-15 տուն հայ կաթոլիկները 1856 թ. համալրվեցին չորս տուն գաղատացի ընտանիքներով (Զմյուռնիայից՝ երեք, Պիլեճիկից՝ մեկ ընտանիքով)[35]: Այստեղ ևս նկատվում է ներքին տեղաշարժը, ինչպես ունիթորների հոտի պարագայում՝ Զմյուռնիա հասնելուց հետո նրանց մի մասն անցավ, ինչպես տեսանք, Թիրե, անշուշտ, նաև Այդընն և այլուր: Հատկապես Այդընում էին կենտրոնանում, մինչև 1890-ական թթ., կաթոլիկ հայերը՝ ամենից առաջ տեղափոխվելով փոքրասիական մյուս մասերից: Դրա շնորհիվ Այդընը պետք է դառնար կրոնավարչական կենտրոն՝ իրականացնելու վիլայեթի կաթոլիկ հայերի հոգևոր սպասարկումը: Այս գործին նպաստեցին հատկապես Վիեննայի Մխիթարյանները՝ դեռևս 1840-ական թթ. սկզբներից: Նրանց ներկայացուցիչը ամեն տարի այցելում էր Այդընն, Մելես, Քուշադա, Սյոքե և այլուր՝ վերոհիշյալ առաքելությամբ, իսկ 1850 թ. Զմյուռնիայի արքեպիսկոպոս Մուսաբինին Այդընի առաքելությունը հանձնում է Վիեննայի Մխիթարյաններին՝ նրանց հետ ընդունած պայմանների համաձայն[36]: Չնայած հայ կաթոլիկ համայնքի և Մխիթարյանների որոշ տարաձայնություններին, Այդընում 1850 թ. հետո նրանց հաջողվել էր ձեռք բերել ոչ մեծ մի մատուռ և գերեզմանատան տարածք:

Շատ ավելի փոքրաթիվ էին, Այդընի կաթոլիկների համեմատությամբ, Թիրեի, Բայանդրրի, Քուշադայի և Սյոքեի նրանց դավանակիցները՝ մեկից մինչև մի քանի ընտանիք[37]: Գաղատիայից եկած հայերը մինչև 1831 թ. կաթոլիկական առանձին համայնքի պետական ճանաչումը, իրենց կրոնական ծեսերն ու արարողությունները կատարում էին Հայ առաքելա-

[35] **Քոսեան Յ.,** նշվ. աշխ., հ. Բ, էջ 40:
[36] Նույն տեղում, էջ 35-37:
[37] Նույն տեղում, էջ 40:

կան եկեղեցիներում, և բաժանումից հետո էր, որ նրանք անցան լատին արքեպիսկոպոսի իրավասությանը: Այս իմաստով հարկ է նկատի առնել Մխիթարյանների կողմից օտար դավանանքին նպաստող նրանց գործունեությունը, այլև դրան հակասող իրական ջանքերը՝ ազգային լեզուն պահպանելու (պաշտամունքի, աղոթքի լեզուն նրանց այդ գործառույթի շնորհիվ մնում էր հայերենը), հայալեզու վարժարաններ ստեղծելու ասպարեզում: Այդընում նրանց հիմնած վարժարանը (1853 թ.[38]) ըստ ամենայնի նպաստեց նաև թուրքախոս հայ հանրության մեջ հայախոսության տարածմանը, որի բազմաթիվ օրինակները կարող ենք գտնել Զմյուռնիայի շրջակայքում բնակվող հայերի մեջ: Անշուշտ, այդ ամենը թույլ պատվար էր ի վաղուց անտի հռոմեադավանությանը հարած հայ կաթոլիկների ուծացումը կանխելու համար, բայց այստեղ հույժ կարևոր է այն ճշմարտությունը, որ Մխիթարյանները, իրենց գործունեությունը պայմանավորելով կաթոլիկ եկեղեցու ինքնությամբ և գործելով նրա հովանու ներքո, ազգի գաղափարին կամ նրա պահպանությանը նպաստող գործոնների մեջ ամենևին էլ առաջնային նշանակություն չէին տալիս եկեղեցուն, այլ կարևոր էին համարում ազգային լեզուն, բարքերը և սովորույթները, որոնք պետք է ի սպաս դրվեին այդ նույն՝ ազգի գաղափարին: Օսմանյան Թուրքիայում ի սկզբանե գործառում էր միլեթների՝ կայսրության մեջ ապրող հպատակ ազգերի կրոնադավանական փակ շղթան կամ համակարգը, միլեթից դուրս մարդը ոչինչ էր, նա կարող էր գոյատևել իր միլեթում, անգամ փոխել իր միլեթը, սակայն դրանից հետո նրա իրավասությանը ենթարկվելու, այլ կերպ ասած՝ իր կրոնը և ազգությունը փոխելու պայմանով: Դրա վրա հենված՝ օսմանյան վարչատնտեսական, իրավական ու հարկային հարաբերությունները դեռևս երկար պետք է պահպանվեին, նույնիսկ թանզիմաթից շատ հետո, XIX դ. երկրորդ կեսին, իսկ դրանց վերապրուկները՝ մինչև կայսրության գոյության ավարտը, էլ ուր մնաց՝ մեր քննարկած ժամանակաշրջանում՝ XVII-XIX դդ. առաջին կեսը: Մխիթարյանների երախտիքն այն է, որ նրանք փորձում էին լուծել ազգ-եկեղեցի փոխադարձ պայմանավորվածության մեջ առաջացած հիմնախնդիրը ազգապահպանության այլ, մասնավորապես կրթության և լուսավորության բնագավառում, որպիսին տեսանք Զմյուռնիայի հայ կաթոլիկ հանրության հետ նրանց առնչվելու

[38] Տե՛ս **Հ.Յ.Ք.[օսեան]** Յիսնամեայ յոբելեան հանդէս հաստատութեան Մխիթարեանց որ յԱյտըն (Հանդէս ամսօրեայ, 1903, N 6, էջ 180-187):

պայմաններում: Սակայն ազգային եկեղեցուց դուրս և նրանից անկախ ազգության գաղափարը, որ հասարակական գիտակցության այլ ասպարեզներում (կրթություն, լուսավորություն, գիտություն) միանգամայն կարող էր ցուցադրել իր հաջողությունները, կենսունակ չէր կարող լինել առաքելական եկեղեցուց ազգության օտարման պայմաններում: Այդ էր պատճառը, որ վերջնականապես կտրվելով ազգային եկեղեցուց, Զմյուռնիայի հայ կաթոլիկները կտրվեցին նաև ազգությունից: Իր ժամանակին դավանանքի և խղճի ազատության գաղափարը կրոնական համոզմունքին համադրած մտայնությունը, որով առաջ էր ընթանում Եվրոպան, ուշացած դուրս եկավ հայ ազգություն-եկեղեցի հարաբերություններում:

Այդընի վիլայեթում առանձին համայնք կազմելու իրավունք ստանալուց՝ 1831 թ. հետո սակավամարդ հայ կաթոլիկ ընտանիքները սկսեցին ցրվել՝ ձգտելով գործել Կ. Պոլսում կամ Եվրոպայում խմբված իրենց դավանակիցների շրջանում: XIX դ. վերջին այս կերպ չքացան Այդընի, Նազիլիի, Դենիզլիի, Թիրեի և այլ բնակավայրերի հայ կաթոլիկ ընտանիքները՝ տարրալուծվելով Զմյուռնիայի և Օսմանյան Թուրքիայի իրենց դավանակիցների զանգվածի մեջ:

АРМЯНЕ – КАТОЛИКИ В СМИРНЕ И ОКРЕСТНЫХ НАСЕЛЕННЫХ ПУНКТАХ (XVIII В.)

ХАРАТЯН А.А.

Резюме

В 1847 г. во главе со своим духовным лидером Товмасом Исаверденцем армяне-католики мигрировали из Нахиджевана в Смирну (более 1000 чел.). Причиной миграции послужило ужесточение экономических и религиозных гонений на всей территории Восточной Армении в период правления Надир-шаха. Часть мигрантов обосновалась в Смирне, отдельные группы, со своими семьями рассеявшись по окрестным городам и поселкам – Айдын, Тира, Байандыр, Кушада – занялись торговлей, ремеслами и земледелием. Выбор католиками г. Смирны в качестве конечной точки миграции объяснялся тем, что именно здесь было сосредоточено значительное число населения, имеющего европейское происхождение, и в их среде мигранты могли себя чувствовать сравнительно комфортно. Помимо этого, данный регион был особенно привлекателен для мигран-

тов тем, что здесь активно действовали европейские консульства. В особенности Айдын стал для католиков Нахиджевана духовно-административным центром под покровительством католических конгрегаций. В Эгейском регионе армяне-мигранты из Нахиджевана с течением времени утеряли национальные традиции, ими были забыты язык, обычаи и обряды, благодаря которым они сохранили национальную идентичность на родине – в Нахиджеване. В последующие десятилетия и особенно в XIX в. все это ускорило их ассимиляцию с католиками в городах Османской Турции и Европы.

CATHOLIC ARMENIANS IN SMYRNA AND THE NEIGHBORING AREAS (XVIII c.)

A. KHARATYAN

Abstract

In 1847 Catholic Armenians (more than 1000) headed by their religious leader Tovmas Isaverdentsi migrated from Nakhijevan to Smyrna. This migration was motivated by the severe economic and religious persecutions common in the whole territory of Eastern Armenia during the rule of Nadir Shah. Some migrants settled in Smyrna, while others with their families scattered around the neighboring cities and settlements like Aydyn, Tira, Bayandyr, Kushada and became engaged in trade, handicrafts, and agriculture. The Catholics' choice of Smyrna as a final point of their destination can be accounted for by the fact that a large number of population of European descendance was concentrated there and the migrants would feel relatively comfortable among them. Moreover, the given region was appealing to migrants because of many European consulates actively working there. Particularly Aydyn, under the auspice of Catholic congregations, turned into a religious-administrative center for the Catholics of Nakhijevan. In the Aegean region, the Armenian migrants from Nakhijevan lost their national traditions in the course of time, forgot their mother tongue, habits and rituals, owing to which they had managed to keep their national identity in their homeland – in Nakhijevan. In the successive decades, particularly in XIX century, all these factors brought about their rapid assimilation with the Catholics that lived in the cities of Ottoman Turkey and Europe.